Ծուշանիկ Կուրղինյան

Գեղջկուհու բախտավորություն

Ձիուն նստած, բեղն ոլորած,
Գտակը ծուռ մի կողքի,
Կուրծքը բացած-քամուն տված՝
Յարս սարից վայր կիջնի:

Բլբուլ, գիտե՞ս այդ երգերից,
Թե չգիտես, սովորիր .
Դուշման, փախի՛ր սարի լանջից՝
Թե չփախչես, վախեցիր:

Ծաղիկ, փախի՛ր խոպան դաշտից,
Կտրիճ կրծքին շատ կապրես,
Հովիկ, թռի՛ր լեռ ու ժայռից,
Գանգուրները տատանես:

Յարս եկավ, ջանս եկավ,
Սև ձին տակը խաղալով,
Հեռվից եկավ, հոգնած իջավ,
Սիրտը սիրով, համբույրով . . .

Ծաղիկ, չգաս— քեզ տեղ չեմ տա
Կտրիճ կրծքին, որ ապրես—
Հովիկ չգաս, քեզ չեմ թույլ տա

Գանգուրները տատանես:

Ազիզ մորից վախվխելով
Ծածուկ սիրել եմ, տանջվել,
Գիշերն անքուն, թաց աչքերով
Նրան վաղո՛ւց սպասել . . .

1905